

«ԱՍ ՄԵՏԱԼ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Բանեցված կապարաթթվային մարտկոցների և
մետաղների (մետաղական թափոնների)
վերամշակման գործարանի վերազինման

*Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
(լրամշակված տարբերակ)*

Ձեռնարկող՝
«ԱՍ ՄԵՏԱԼ» ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ձեռնարկորդի ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ.....	3
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ.....	3
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	7
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԸ.....	9
4.1. Տեղադիրքը.....	9
4.2. Կլիմայական պամանները	11
4.3. Օդային ավազան	14
4.4. Ջրային ռեսուրսները	14
4.5. Հողերի բնութագիրը.....	14
4.6. Կենսաբազմազանություն	15
4.6.1. Բուսական աշխարհ	15
4.6.2. Կենդանական աշխարհ	16
4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	16
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	16
5.1. Առկա իրավիճակը	16
5.2. Օգտագործվող հումքի բնութագրերը	16
5.2.1. Մարտկոցների բնութագիրը	16
5.2.2. Կապարի թափոն	17
5.2.3. Պղնձի ջարդոն/թափոն	18
5.2.4. Ալյումինի ջարդոն/թափոն	18
5.2.5. Ծծմբական թթու	18
5.3. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ.....	19
5.3.1. Բանեցված կապարաթթվային մարտկոցների և այլ հումքի վերամշակման տեղամաս	19
5.3.2. Ալյումինի և պղնձի թափոնների վերամշակման տեղամաս	20
5.3.3. Գազամաքրման համակարգ.....	20
5.4. Օգտագործվող բնառեսուրսներ.....	20
5.5. Արտանետումներ, արտահոսքեր և արտադրական թափոններ.....	20
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	22
7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	24
8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	25

1. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Սույն նախաձեռնության ձեռնարկող է «ԱՍ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերությունը հիմնադրվել է 2019 թվականին, իսկ գրանցման համարն է 52.110.1079012: Ձեռնարկողի գրանցման վկայականի (Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի) պատճեն ներառված է սույն նախնական գնահատման հայտում (այսուհետ՝ ՆԳՀ) որպես Հավելված 1:

Ընկերությունը ներկայումս նախատեսում է գործունեություն ծավալել մետաղների, մետաղական թափոնների և այլ արտադրական թափոնների գործածության ոլորտում, մասնավորապես իրականացնելով դրանց հավաքում, տարբեր աղբյուրներից ձեռքբերում և վերամշակում:

Ընկերության գործունեության հասցեն է ՀՀ Արարատի մարզ, քաղաք Արտաշատ, Արտադրական հանգույց/8, որտեղ տեղակայված է նաև վերազինվող գործարանը:

Տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում, շրջակայքում գործում են այլ արտադրական կազմակերպություններ, սպասարկման օբյեկտներ և պահեստային տարածքներ:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Ներկայացվող գործունեության անվանումն է՝ Բանեցված կապարաթթվային մարտկոցների և մետաղների (մետաղական թափոնների) վերամշակման գործարանի վերազինում:

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Արտադրական հանգույց/8 հասցեում առկա շենք շինությունները, հողամասը, գույքն ու սարքավորումները պատկանում են «Մել Մետալ» ՍՊԸ-ին, որը հիշյալ գույքերն ու սարքավորումները ձեռք է բերել դրանց նախկին սեփականատիրոջից՝ «ՈՒՐԱՐՏՈՒ ԼԵՆԴ» ԲԲԸ-ից (համապատասխան փաստաթղթերը առկա են և դրանց ոչ կոնֆիդենցիալ/հրապարակման ենթակա մասերը կներառվեն հետագա ՇՄԱԳ հաշվետվությունում): Համաձայն բանավոր հավաստիացումների, ինչպես նաև դատելով արտադրական տարածքի գույքի, շենք շինությունների և սարքավորումների տեխնիկական վիճակներից ու տեսողական զննումից, ենթադրվում է, որ նախկինում (2010-2011թթ-եր) նշված տարածքում իրականացվել է թափոնների վերամշակում, ինչը հետագայում ընդհատվել է և ներկայումս նախատեսվում է իրականացնել վերամշակման տեխնոլոգիական արդիականացում և վերազինում:

Ստորև բերված են գործարանի առկա վիճակը բնութագրող մի քանի լուսանկարներ.



Նկար 1. Գործարանի բացօթյա տարածք



Նկար 2. Կապարի ձուլման տեղամաս



Նկար 3. Մետաղական թափոնների ձուլման տեղամաս

Ուսումնասիրելով ՀՀ տարածքում բանեցված կապարաթթվային մարտկոցների և մետաղների վերամշակումից ստացվող արտադրատեսակների վերաբերյալ պահանջարկը սույն նախատեսվող գործունեության Ձեռնարկող հանդես եկող «ԱՍ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նախատեսում է իրականացնել թափոնների և մետաղների վերամշակման գործունեություն, որի համար ունի անհրաժեշտ բոլոր պայմանավորվածություններն ու համաձայնությունները «Մել Մետալ» ՍՊ ընկերության հետ, պայմանագրային հիմունքներով օգտագործելու ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Արտադրական հանգույց/8 հասցեում «Մել Մետալ» ՍՊ ընկերությանը պատկանող շենք շինությունները, հողամասը, գույքն ու սարքավորումները, իրականացնելով լրացուցիչ ներդրումներ արտադրության տեխնոլոգիական գործընթացների արդիականացման և վերամշակման գործարանի վերազինման ուղղությամբ:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
9. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
10. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
11. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
12. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
13. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
14. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,
15. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը,
16. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների

տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

17. Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր (СН 245-71 Санитарные нормы проектирования промышленных предприятий)
18. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,
19. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:

Համաձայն Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի (СН 245-71 Санитарные нормы проектирования промышленных предприятий) նախատեսվող գործունեության համար սահմանված են սանիտարապաշտպան գոտու ապահովման վերաբերյալ պահանջներ, սակայն դրանք փոխկապակցված են արտադրական հզորությունների հետ: Մասնավորապես, գունավոր մետաղների երկրորդային վերամշակման համար 3000տ/տարեկան արտադրական հզորությունների դեպքում սանիտարապաշտպան գոտու պահանջը սահմանված է 1000 մ, 2000-3000 տ/տարեկան արտադրական հզորության դեպքում՝ 500մ: Սույն հայտում ներկայացված նախատեսվող գործունեության արտադրական հզորությունը միաժամանակյա վերամշակման դեպքում չի գերազանցի 2000 տ/տարեկան քանակը, քանի որ նախ՝ արտադրական/տեխնիկական հզորությունները թույլ չեն տալիս և բացի դա, կապարի, իսկ հետագայում պղնձի կամ ալյումինի երկրորդային վերամշակումները համաժամանակյա չեն կարող իրականացվել, ուստի 2000տ/տարեկան գումարային քանակ չի կարող վերամշակվել: Քանի որ հիշյալ սանիտարական նորմով չկա սահմանված պահանջ մինչև 2000տ/տարեկան արտադրական հզորությունների համար, հետևաբար մեր կողմից տրամաբանորեն վերցվել է սանիտարապաշտպան գոտու պահանջի 2000 տ/տարեկան ցուցանիշից ցածր հաջորդ ստորին շեմը, որը հիշյալ նորմով սահմանված է 300 մ.: Այս տրամաբանության կիրառման պարագայում սույն նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքը մյուս հաստատություններից, այդ թվում նաև ամենամոտ բնակելի տնից հեռավորությամբ չի հակասում СН 245-71 սանիտական նորմով սանիտարապաշտպան գոտու համար սահմանված պահանջին:


Նախատեսվող գործունեության պլանավորման և հետագա իրականացման բոլոր փուլերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու թափոնների գործածության գործունեությունը կարգավորող օրենսդրությանը, <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքով, ինչպես նաև <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի գործունեության տեսակներին և ենթակա է փորձաքննություն՝ երկու փուլով:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԸ

4.1. Տեղադիրքը

Նախատեսվող գործունեությունը ծավալվելու է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Արտաշատ քաղաքի Արտադրական հանգույց/8 հասցեով գտնվող գործարանում: Գործարանի հարևանությամբ՝ ամենամոտը ավելի քան 340 մ հեռավորությամբ տեղակայված է այլ արտադրական հանգույց: Երևան-Երասխա Մ-2 միջպետական ճանապարհից հեռավորությունն ավելի քան 310 մ է: Ամենամոտ բնակելի տունը տեղակայված է 302 մ հեռավորությամբ: Թիվ 8 արտադրական հանգույցի անմիջական հարևանությամբ տեղակայված բնակելի թաղամասեր չկան, իսկ համեմատաբար մոտ տեղակայված կառուցվածքները թիվ 8 արտադրական հանգույցի ֆունկցիոնալ ենթակառույցներն ու մասնաշենքերն են:

Տեղանքի իրադրության սխեման բերված է ստորև՝ Նկար 4-ում:



Գեոմորֆոլոգիական տեսակետից բնութագրվող տարածքը հարթ է, բացարձակ նիշերի տարբերությունը ծովի մակերևույթից կազմում է մոտ 850- 900մ:

Արտաշատ համայնքը գտնվում է Արարատյան հարթավայրի կենտրոնական հատվածում, Արաքս գետի ավազանում: Երկրաբանական կառուցվածքի և տեկտոնիկայի գոյություն ունեցող ուսումնասիրությունների համաձայն՝ բնութագրվող տեղանքի երկրաբանական կառուցվածքի ձևավորմանը մասնակցում են գրունտների հզոր շերտախումբ: Գրունտների վերին շերտերում մեծ տարածում ունեն ժամանակակից և էոցին-միոցենի գետալճային, կրաքարային և հրաբխածին տարբեր հզորությունների գրունտներ:

Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀԾՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ տեղամասը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են $A = 0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

4.2. Կլիմայական պամանները

Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Բնութագրվող տարածքին, քանի որ գտնվում է Արտաշատ քաղաքում, բնորոշ են «Տաք» կլիմայական ցուցանիշները: Արտաշատ քաղաքին բնութագրական են շոգ և չորային ամառները: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 829.1 մետր: Օդի հուլիսյան առավելագույն միջին ջերմաստիճանը $+25.30^{\circ}\text{C}$ է, իսկ հունվար ամսի միջին ջերմաստիճանը -3.6°C : Բցարձակ առավելագույն ջերմաստիճանը $+43^{\circ}\text{C}$ է, իսկ բացարձակ նվազագույնը -29°C : Օդի միջին հարաբերական խոնավությունը 64 % է, տարեկան տեղումների քանակը՝ 254 մմ: Քամու միջին արագությունը կազմում է 2-3 մ/վրկ: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի թիվը 36 է: Կայուն ձյան ծածկույթ չի ձևավորվում: Միջին տվյալներով ձմեռը սկսվում է դեկտեմբերի երկրորդ կեսից և վերջանում մարտի առաջին կեսին: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 40 սմ:

Ստորև բերված են տեղանքի կլիմայական ցուցանիշները ըստ Արտաշատի օդերևութաբանական կայանի տվյալների:

Աղյուսակ 4.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութա- բանական կայան	Օդերևութա- բանական կայանի բարձրությո- նը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարե- կան	Բացար- ձակ նվազա- գույն	Բացարձակ առավելա- գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	829	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	- 29	43

Աղյուսակ 4.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արտաշատ	829	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

Աղյուսակ 4.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Օդերևութա- բանական կայան	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ		
	Ըստ ամիսների												Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	8	10	22	24	17	40	36	46
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25			

Աղյուսակ 4.4. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութա- նական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտա- յին ճնշում, (հՊա)	Մսիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների կոմենտություն %	Միջին ամսական առատություն,մ/վ	Միջին տարեկան առատություն,մ/վ	Ուժեղ քամիներով (Մ15մ/վՊ օրերի թանակ)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ տարիների "n"		
			Հյուսիս- սային (Հս)	Հյուսիս- արևելյան (ՀսԱրլ)	Արևել- յան (Արլ)	Հարավ- արևելյա ն (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ- արև մտյան (ՀվԱրմ)	Արև մտյան (Արմ)	Հյուսիս- Արև մտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արաբկիր	920.2	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	0.4	7	21	24	26
			1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7							
		Ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0.6					
			1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6							
		Հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0.4					
			1.7	1.9	1.7	2.0	2.0	1.0	2.7	2.3							
		Հոկտեմ- բեր	7	12	12	19	8	10	16	16	85	0.3					
			1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2							

4.3. Օդային ավազան

Արտաշատ քաղաքի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Արտաշատ քաղաքում չկան ՊՈԱԿ-ի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՊՈԱԿ-ի հաշվարկային տվյալների, Արտաշատ քաղաքի օդային ավազանում ֆոնային աղտոտվածությունը կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ³,
- ծծմբային անհիդրիդ՝ 0.05 մգ/մ³,
- անօրգանական փոշի՝ 0.3 մգ/մ³:

4.4. Ջրային ռեսուրսները

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Արաքս գետն է:

Արաքսը հանրապետության խոշորագույն գետն է: Անդրսահմանային գետ է, որի ավազանն ընդգրկում է Թուրքիայի, Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի տարածքը:

Ունի 1072 կմ երկարություն¹, որից 200 կմ կազմում է Հայաստանի և Թուրքիայի սահմանը: Հայաստանի գետերի մեծագույն մասը (որոնց ավազանները, միայն վերցված, կազմում են հանրապետության տարածքի 73,5 տոկոսը) պատկանում է Արաքսի ավազանին: Արաքսը վաղնջական ժամանակներից հանդիսացել է հայոց քաղաքակրթության կարևոր բնօրրաններից մեկը:

Արաքսի սնումը խառն է, հորդացումը՝ մարտից հունիս, առավելագույնը՝ մայիսին: Առաջին հորդացումը՝ մարտ–ապրիլ, կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը (ավելի բուռն)՝ մայիս–հունիս, լեռների ձնհալքի հետ: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս–օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ հորդացումը աշնանային անձրևներից է: Հորդացման ժամանակ Արաքսը մեծ ավերածություններ է առաջացնում, հատկապես Արարատյան, Միլիի ու Մուղանի դաշտերում: Հորդացումների ժամանակ Արաքսը միջին և ստորին հոսանքներում հաճախակի փոխում է իր հունը՝ միշտ շարժվելով դեպի հարավ:

Գործարանի տարածքից ուղիղ գծով հեռավորությունը մինչև Արաքսի մոտակա հատված կազմում է 3.3 կմ:

4.5. Հողերի բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքին հիմնականում բնորոշ են բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ ցեմենտացած հողային տիպեր: Առանձին

¹ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A1%D6%84%D5%BD>

տեղամասերում հողերը ներկայացված են նաև դարչնագույն հողերի կրագերծված ենթատիպով:

Անմիջապես ներկայացվող տարածքում բաց հողային մակերես կամ բուսաշերտ պարունակող մասեր չկան:

4.6. Կենսաբազմազանություն

Արտաշատ քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

4.6.1. Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

Արարատի մարզում բուսականությունը կիսաանապատային է և անապատային:

Կիսաանապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Օշինդրա-Էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*. *Aeloropus littoralis* (Gouan) Parl.

Անապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. Dendroides* Pall., *S. Nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* (Pall.) Bieb.

Դեղաբույսերից տարածված են՝ Տուղտ Դեղատու, Տուղտ հայկական (*Althaea officinalis*, *A. armeniaca*), Իշավարունգ սովորական (*Ecballium elaterium*), Տոբոն ներկատու (*Rubia tinctorum*), Սպանդ սովորական (*Peganum harmala*), Փշատենի

նեղատերև (Elacagnus angustifolia), Ալոճենի մուգ արնագույն և այլ տեսակներ (Crataegus atrosanguinea):

Հազվադեպ և անհետացող բուսատեսակներից են՝ Գազ տարօրինակը (Astragalus paradoxus), Կոմուխ Օշեի (Inula aucherana):

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Արտաշատ քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկա բնական բուսածածկ:

4.6.2. Կենդանական աշխարհ

Ողնաշարավոր կենդաններից հանդիպում են՝ շնագայլ, եղեգնակատու, վայրի խոզ, գյուրգա, ջրասամույր, միջերկրածովյան կրիա, ճահճակուղբ, կաքավ, նապաստակ, խեցգետին, մշկամուկ, անողնաշարավորներից՝ անատամ:

Հազվադեպ և անհետացող կենդանատեսակներից են՝ Սովորական երկարատև չղջիկ (Miniopterus schreibersi Kuhl), ծական (Sabanejewia aurata De Filippi):

4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը,

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը:

Նշված պահպանվող տարածքները բավականաչափ հեռու են նախատեսվող աշխատանքների իրականացման վայրերից և չեն կրի որևէ ազդեցություն այդ աշխատանքների իրականացման արդյունքում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1. Առկա իրավիճակը

Ներկա պահին տարածքում առկա է հիմնական արտադրական մասնաշենքը և մի քանի օժանդակ շինություններ: Հիմնական մասնաշենքում տեղադրված և ժամանակին շահագործվում էին մի քանի գազային և էլեկտրական վառարաններ, խողովակաշար, շենքից դուրս առկա են ցիկլոն, արտազատվող գազերի զտման համակարգ, օդափոխության համակարգ և բանեցված մարտկոցների մասնատման սեղան:

Տարածքում կան մեքենաների կայանատեղի, պահեստային շինություն, ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման և էլեկտրամատակարարման ենթակառուցվածքները:

5.2. Օգտագործվող հումքի բնութագրերը

5.2.1. Մարտկոցների բնութագիրը

Մարտկոցները էլեկտրաքիմիական հոսանքի աղբյուր են, որոնք կազմված են մեկ կամ մի քանի գալվանական էլեմենտներից: Մարտկոցի վոլտաժը մեծացնելու

համար օգտագործվում են բազմակի էլեմենտներ, ինչպես 12-Վ ավտոմոբիլային մարտկոցներում: Մարտկոցների աշխատանքի հիմքում ընկած են օքսիդավերականգնման ռեակցիաները: Օքսիդացման և վերականգնման շնորհիվ էլեկտրոդների միջև տեղի է ունենում էլեկտրոնների փոխանակում, որի շնորհիվ էլ մարտկոցը ապահովում է հոսանք: Մարտկոցի օգտագործման տևողությունը կախված է մարտկոցում առկա նյութերի որակից և էլեկտրոլիտի վիճակից:

Ըստ շահագործման, մարտկոցները բաժանվում են երկու տեսակի՝

- *Առաջնային*, որոնք լիցքաթափվելուց հետո չեն կարող վերալիցքավորվել և պետք է վերաթողարկվեն կամ հանվեն գործածությունից, երբ վոլտաժը կնվազի՝ հասնելով զրոյի:

- *Երկրորդային*, որոնք լիցքաթափվելուց հետո կարող են վերալիցքավորվել և օգտագործվել կրկին:

«ԱՍ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությունը նախատեսում է հավաքել միայն կապարաթթվային մարտկոցներ (նկար 5):

Կապարաթթվային մարտկոցները հիմնականում օգտագործվում են ավտոմեքենաներում: Նրանք մեծամասամբ կազմված են վեց գալվանական բջիջներից, որոնցից յուրաքանչյուրի լարումը սովորաբար կազմում է 2 Վ: Ամեն բջջի կատոդը պատրաստվում է կապարի երկօքսիդից (PbO_2), իսկ անոթը՝ կապարից: Երկու էլեկտրոդները գտնվում են ծծմբական թթվի լուծույթի մեջ:

Կապարաթթվային մարտկոցը երկրորդային մարտկոց է:



Նկար 5. Ավտոմեքենաների կապար-թթվային մարտկոց

5.2.2. Կապարի թափոն²

Կապարը մետաղ է, լատիներեն՝ Plumbum (Pb):

Կապարը Մենդելեևի աղյուսակի 14-րդ խմբի տարր է, ատոմային համարը՝ 82: Այն հեշտ ձուլվող արծաթագույն մետաղ է, խտությունը նորմալ պայմաններում՝ 11.34 գ/սմ³, հալման ջերմաստիճանը՝ 327.3°C:

Կապարը մարդկությանը հայտնի է մի քանի հազարամյակ, այն հեշտությամբ արդյունահանվում և մշակվում է:

² <https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B2%D0%B8%D0%BD%D0%B5%D1%86>

Կապարի արտադրության համար հիմնականում օգտագործում են գալենիտ պարունակող հանքանյութ:

5.2.3. Պղինձի ջարդոն/թափոն³

Պղինձը մետաղ է, լատիներեն՝ *Cuprum* (Cu):

Պղինձը Մենդելեևի աղյուսակի 11-րդ խմբի տարր է, ատոմային համարը՝ 29: Այն պլաստիկ դեղնակարմիր գույնի մետաղ է: Պղինձը բնորոշվում է բարձր ջերմա և էլեկտրահաղորդունակությամբ, որով և պայմանավորված է պղինձի հիմնական կիրառումը տնտեսությունում:

Պղինձը նաև լայնորեն օգտագործվում է տարբեր համաձուլվածքներում՝ արույրում, բրոնզում և մելքիորում:

Պղինձի տությունը նորմալ պայմաններում՝ 8. 9 գ/սմ³, հալման ջերմաստիճանը՝ 1083°C:

5.2.4. Ալյումինի ջարդոն/թափոն⁴

Ալյումինը (Al, լատիներեն՝ *Aluminium*), Մենդելեևի աղյուսակի 13-րդ խմբի տարր է, ատոմային համարը՝ 13:

Մետաղական ալյումինի խտությունը նորմալ պայմաններում՝ 2. 7 գ/սմ³, հալման ջերմաստիճանը՝ 660. 1°C: Դասվում է թեթև մետաղների շարքին: Թթվածնից և սիլիցիումից հետո ամենատարածված տարրն է երկրի կեղևում:

Ալյումինը սպիտակից դեպի արծաթափայլ երանգով մետաղ է, օժտված է բարձր ջերմա և էլեկտրահաղորդունակությամբ, կայուն է կորոզիայի նկատմամբ, որպես կանոն պատվում է օքսիդացված թաղանթով:

5.2.5. Ծծմբական թթու

Մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտը ծծմբական թթվի լուծույթ է:

Ծծմբական թթուն՝ H₂SO₄, անօրգանական միացություն է, ուժեղ թթու է, ծծմբի օքսիդացման բարձրագույն աստիճանով: Նորմալ պայմաններում խիտ ծծմբական թթուն ծանր յուղային հեղուկ է առանց հոտի և գույնի: Արդյունաբերությունում ծծմբական թթու է համարվում ինչպես H₂SO₄-ի ջրային լուծույթը, այնպես էլ դրա խառնուրդը ծծմբային անհիդրիդի (օլեում՝ SO₂) հետ:

Ծծմբական թթուն շատ ագրեսիվ միացություն է, այն լուրջ վտանգ է ներկայացնում մարդու օրգանիզմի բոլոր հյուսվածքների համար: Ծծմբական թթուն առաջացնում է շնչառության խանգարումներ, հագ, լարինգիտ, բրոնխիտ, տրախեիտ և այլն:

Աղյուսակ 5.1-ում բերված են ներկայացված նյութերի թույլատրելի կոնցենտրացիաները աշխատանքային գոտում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 6 դեկտեմբերի 2010 թ. N 27-Ն հրամանով հաստատված N2.2.5-004-10 սանիտարական կանոնների:

³ <https://ru.wikipedia.org/wiki/%D0%9C%D0%B5%D0%B4%D1%8C>

⁴ <https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B5%D1%80%D0%BD%D0%B0%D1%8F%D0%BA%D0%B8%D1%81%D0%BB%D0%BE%D1%82%D0%B0>

Աղյուսակ 5.1. Հումքատեսակների պարունակության նորմը աշխատանքային գոտում

Նյութի անվանումը	Սահմանային թույլ- լատրելի կոնցենտ- րացիան (ՄԹԿ) աշխատանքային գոտում, մգ/մ ³	Ազդեցության տեսակը	Վտանգավո- րության դասը
Ծծմբական թթու	1	Ընդհանուր	2
Կապար	-/0.05	Ընդհանուր	1
Ալյումին	6/2	Ֆիբրոգեն	3
Պղինձ ⁵	1/0. 5	Ընդհանուր	2

5.3. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

5.3.1. *Բանեցված կապարաթթվային մարտկոցների և այլ հումքի վերամշակման տեղամաս*

Նմանատիպ ձեռնարկությունների փորձը ցոյց է տալիս, որ հիմնականում բերվում են դատարկ մարտկոցներ: Այնուամենայնիվ գործնականում գրեթե անհնար է խուսափել այնպիսի մարտկոցային թափոնների ընդունումից, որոնցում կա նաև թթվային լուծույթ, ուստի նախատեսվում է տեղամասը կահավորել նաև նոսր էլեկտրոլիտի չեզոքացման հանգույցով, որը բաղկացած կլինի թթվակայուն երկու բաքերից, կրի պահեստից և լուծույթի թթվայնությունը չափող սարքերից:

Կապարթթվային մարտկոցների թափոնների և այլ հումքից ակնկալվող կապարի վերամշակման պլանային արտադրողականությունը նախատեսված է՝ 1800 տ/տարի: Այս համատեքստում հարկավոր է նշել, որ բացի կապարաթթվային մարտկոցներից, հետագայում հնարավոր է որպես հումք դիտարկել նաև կապարի մետաղական թափոնները:

Այս տեղամասը նոր պետք է ձևավորվի: Այդ նպատակով արտադրամասը կկահավորվի համապատասխան սարքավորումներով, այդ թվում բանեցված մարտկոցների մասնատման սեղան, ինչպես նաև ևս մեկ գազային վառարան:

Մարտկոցներում էլեկտրոլիտի առկայության դեպքում մարտկոցներում պարունակվող լուծույթը կդատարվի հատուկ թթվակայուն նյութերից պատրաստված բաքերի մեջ: Բաքերը կօգտագործվեն հաջորդաբար: Առաջին բաքի 50% լցվելու պես, կսկսվի լցվել երկրորդ բաքը: Առաջին բաքում կչափվի լուծույթի թթվայնությունը, ըստ որի կպատրաստվի կրի լուծույթ, որով կչեզոքացվի ծծմբական թթուն: Չեզոքացումից հետո կկատարվի հեղուկի պարզեցում, ջուրը կհեռացվի կոյուղու ցանց, իսկ նստվածքը կուղարկվի ձուլման:

Բանեցված մարտկոցների մասնատման արդյունքում առաջացող կապար պարունակող թափոնները, էլեկտրոլիտի չեզոքացման նստվածքը, ինչպես նաև այլ տեղերից ընդունվող կապարի թափոնները կներբեռնվեն վառարանների մեջ, կհալվեն

⁵ Քանի որ ՀՀ N2.2.5-004-10 սանիտարական կանոններում պղնձի համար նորմատիվ չկա, վերցվել է ՌԴ նորմատիվը

և հատուկ համակարգով կտրվեն կաղապարների մեջ՝ ձուլակտորներ ստանալու համար:

Տեղամասի պլանային արտադրողականությունը ինչպես վերևում նշվեց, նախատեսված է 1800 տ/տարեկան:

5.3.2. Այլումինի և պղնձի թափոնների վերամշակման տեղամաս

Այս տեղամասում նախատեսվում է իրականացնել վառարանների նորոգում, ավտոմատ կառավարման և հսկման համակարգերի ներդրում:

Այլումինի և պղնձի թափոնների հալումը և ձուլակտորների արտադրությունը կկատարվեն ըստ նախատեսվող տեխնոլոգիական ռեգլամենտի պահանջների: Տեխնոլոգիական ռեգլամենտը կմշակվի և կներկայացվի փորձաքննության հիմնական փուլում:

Տեղամասի պլանային արտադրողականությունը նախատեսված է.

- Պղինձ՝ մինչև 1000 տ/տարի,
- Այլումին՝ մինչև 1800 տ/տարի:

5.3.3. Գազամաքման համակարգ

Ներկայում գործարանի հիմնական արտադրական մասնաշենքում տեղադրված է գազամաքման համակարգ, որը բաղկացած է օդամղիչից, գոխների /ֆիլտրերի/ հանգույցից և ծխատարից:

Նախատեսվում է տեղադրել լրացուցիչ ֆիլտրեր, սկրուբեր, իսկ էլեկտրոլիտի տեղամասում՝ նոր օդափոխության համակարգ:

Հիմնական ՇՄԱԳ փուլում կհաշվարկվեն օդափոխության ծավալները և անհրաժեշտության դեպքում կտեղադրվի լրացուցիչ օդամղիչ:

5.4. Օգտագործվող բնառեսուրսներ

Վերազինումից հետո գործարանում նախատեսվում է օգտագործել ջուր՝ սարքավորումների հովացման համար, ինչպես նաև անձնակազմի խմելու կենցաղային նպատակներով:

Կօգտագործվի բնական գազ՝ վառարանների ջերմային ռեժիմը ապահովելու համար:

Ջրի և գազի պահանջարկը կհաշվարկվի հիմնական գնահատման փուլում և արդյունքները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

5.5. Արտանետումներ, արտահոսքեր և արտադրական թափոններ

Վերազինումից հետո գործարանի շահագործման ընթացքում կառաջանան հետևյալ արտանետումները.

Ա. Բանեցված մարտկոցների տեղամաս՝ ծծմբական թթվի գոլորշիներ

Բ. Գունավոր մետաղների ձուլման տեղամասեր

- Ազոտի երկօքսիդ (NO₂),
- Ածխածնի օքսիդ (CO),
- Պինդ մասնիկներ (ՊՄ):

Գործարանի աշխատանքի արդյունքում արտադրական կեղտաջրեր առաջանում են միայն էլեկտրոլիտի չեզոքացման տեղամասում: Հովացման համար նախատեսվում է տեղադրել փակ շրջանառու համակարգ, որում ջուրը օգտագործվում է միայն հովացման համար, որի ժամանակ նյութերի հետ շփում տեղի չի ունենում և արտահոսք չի առաջանում:

Գործարանի շահագործման արդյունքում կառաջանան հետևյալ արտադրական թափոնները.

- «Գունավոր մետաղների ձուլումից գոյացած խարամ», ըստ ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայր/ նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի դասիչ՝ 3120030001013:
- «Մաքրագոծիչներից փոշի՝ գունավոր մետաղների պարունակությամբ», դասիչ՝ 31201700 01 01 3:

Արտանետումների, թափոնների և ջրօգտագործման քանակները կհաշվարկվեն և կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության կազմում:

**6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ,
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Ներկայացվող գործունեության բնապահպանական ռիսկերը հիմնականում պայմանավորված են հետևյալ գործընթացներով.

- Թափոնների տեղափոխում, պահեստավորում, բեռնում
- Բանեցված մարտկոցների մասնատում և էլեկտրոլիտի չեզոքացում
- Մետաղների թափոնների հալում և կադապարում:

Հաշվի առնելով, որ այս փուլում նախագծային փաստաթղթեր չեն պահանջվում, ստորև ներկայացված են ընդհանուր բնույթի բնապահպանական և սոցիալական միջոցառումների ծրագիր:

Աղյուսակ 6.1. Բնապահպանական և սոցիալական միջոցառումների համառոտ ծրագիր

<i>№</i>	<i>Արտադրական գործընթացը</i>	<i>Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում</i>	<i>Մոնիթորինգի եղանակ</i>
1	Թափոնների ընդունում	ա/ Թափոնները տեղափոխել հատուկ կահավորված տրանսպորտային միջոցներով բ/ Բանեցված դողածածկանները և այլ թափոնները պահեստավորել առանձին հարթակներում	Արտաքին զննում Արտաքին զննում
2	Վառարաններում թափոնների հալում	ա/ Վառարանների կառավարումը իրականացնել ավտոմատ չափիչ հսկիչ սարքերով բ/ Ջերմաստիճանի ավտոմատ կարգավորում	Հսկիչ չափիչ սարքերի գրանցումների վերլուծություն
3	Բնական գազի այրում	Այրման համար մղվող օդի և բնական գազի համամասնությունների կառավարում	
4	Սարքավորումների հովացում	Հովացումը իրականացնել փակ շրջանառու համակարգով, բացառելու համար ջրի աղտոտումը նյութերի հետ շփման արդյունքում	Արտաքին զննում
5	Գործարանի շահագործում	Այրման գործընթացի մոնիթորինգ	Տարածքում և մոտակա բնակելի թաղամասում օդի աղտոտվածության

№	Արտադրական գործընթացը	Բնապահպանական կամ սոցիալական միջոցառում	Մոնիթորինգի եղանակ
			պարբերական ⁶ չափում, այդ թվում՝ NO ₂ , CO, ՊՄ
6	Աշխատանքի անվտանգություն	ա/ մշակել և ԱԻՆ մարմինների հետ համաձայնեցնել «Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանը բ/ Սպասարկող անձնակազմի համար կազմակերպել արտադրամասի անվտանգ շահագործմանն ուղղված ուսուցողական դասընթացներ: գ/ Ապահովել արտադրամասը սպասարկող անձնակազմին անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներով: դ/ Հագեցնել արտադրամասը անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով: ե/ Ապահովել արտադրամասը՝ առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով: զ/ կազմակերպել արտադրամասի տարածքում անձնակազմի առաջին օգնության և բուժսպասարկման կետ	«Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանի առկայություն Դասընթացների մատյանների առկայություն Միջոցների առկայություն Նշանների առկայություն Միջոցների առկայություն Բուժկետի առկայություն
	Սոցիալական պարտավորություններ	ա/ հնարավորությունների սահմաններում Արտաշատի քաղաքապետարանի հետ համաձայնեցված մասնակցել համայնքի սոցիալական ծրագրերին բ/ Ծանուցել մոտակա շենքերի բնակիչներին բոլոր վթարային իրավիճակների մասին լրատվամիջոցների և համայնքապետարանի միջոցով	Արձանագրություն Լրատվամիջոցների առկայություն

⁶ Չափումների մեթոդիկան և պարբերականությունը կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում

7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները կազմակերպվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 20-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի նոյեմբերի 10-ին ժամը 15:00-ին ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանում: Հանրային քննարկման հայտարարությունը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, իսկ հայտարարության տեքստը և նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական գնահատման հայտի նախագիծը/նախնական տարբերակը նախապես ուղարկվել է Արտաշատի համայնքապետարանին՝ խնդրանքով դրանք հրապարակելու, հանրության համար հասանելիությունն ու շահագրգիռ այլ կողմերի իրազեկվածությունն ապահովելու նպատակով: Հանրային քննարկման հայտարարության, մասնակիցների ցանկի և արձանագրության պատճենները ներառված են սույն ՆԳՀ-ում՝ որպես Հավելված 2:

Հանրային քննարկման արդյունքներով Արտաշատի համայնքապետարանը նախատեսվող գործունեության վերաբերյալ տրամադրել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված նախնական համաձայնության գրությունը, որի պատճեն ներառված է սույն ՆԳՀ-ում՝ որպես Հավելված 3:

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Ձեռնարկողի գրանցման վկայականը (Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-11-09

«ԱՍ ՄԵՏԱԼ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 52.110.1079012

Հիմնադրման տարի 2019

Գրանցման ամսաթիվ 2019-06-14

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 51664348

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 04233732

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովարդի ծածկագիր) 05119012

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ / 8 ԱՐՏԱՇԱՏ 0701
ԱՐՏԱՇԱՏ ԱՐԱՐԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս 055 231199

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ԻՆԳԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՆԴՐԻԱՍԻ

Անձնագրային տվյալներ 010583565 2018-09-10 005

Հասցե 13 Փ. 1 ՓԿՂ. / Տ / 12 ՋՐՎԵԺ 2227 ՋՐՎԵԺ ԿՈՏԱՅՔ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հավելված 2. Հանրային քննարկման հայտարարություն, մասնակիցների ցանկ և արձանագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«HAYASTANI HANRAPETUTIUN» ARMENIAN DAILY • www.hhpress.am E-mail: hh@hhpress.am

29.10.2021
ՈՒՐԲԱՅ
թիվ 184 (7625)

30

Լոսյա է տեսնում
1990թ. հոկտեմբերի 9-ից

Սյրենի, հայրենի...

ավոր ջիզը՝ ումը ազա- նամնավո- իտվի կե- ռը քաղա- հիւստնում հայրենիի Ուսա Կա- , կրոն, ժի- ղիի թելա- ճնթարկվե- ռ Ասիւնյան ուլե Ուսա

ու ուղղակի «Խաղաղ Դոն» Իսահակ- աշիղ առ- քանասեղ- յուր ընդգծ-

անմահ «Խաղաղ Դոն» հեղինակին»):

Նույն տարի առիթին հայ գրող և հրապարակախոս Անոս Արզումանյանին Վեբենակայա սանիցայում հասուկ ընդունում է Հոլոխոսը և աշխարհում Իսահակյանին հանձնելու համար իր «Խաղաղ Դոն» վեպի վերջին հրատարակությունը 4 հատորով: Հոլոխոսը առաջին հատորի վրա անում է հետևյալ մակագրությունը. «Дорогому Аветику Исаакяну с любовью и глубоким уважением. М. Шолохов, 30.4.55»: (Մի- ռելի Ավետիկ Իսահակյանին, սրտագին սիրով և խորին հարգանքով: Մ. Հոլոխոս, 30.4.55):

Ա. Արզումանյանին իր հատորները հանձնելով՝ Հոլոխոսը ասում է. «Այս համես նվերը հանձնիր, խնդրեմ, մեծագույն Ավետիկ Իսահակյանին: Ես այս տիպի անեի ավելի առաջ, մինչև որ նա ինձ ուղարկեց իր մեկհատորյալը: Ասա՛ իրեն, որ մեր Դոնի կազակները գիտեն և սիրում են Իսահակյանական գերող քնարը: Չակայի ամուր առողջություն իրեն, այնուհետև, ինչդիպիսն լեզենդար Սասունցի Դավթի մոտ է»):

Հոլոխոսի մասին իր հուշերում այս մասին է գրում այդ հանդիպման ներկա, ռուսովարենակ հայ գրող Միխայիլ Անդրիասովը:

1956 թ. հունվարի 18-ին ութսունամյա բանաստեղծը հոգու դարձն է համարում գրել Հոլոխոսի մասին: Իսահակյանի գրածը, հիմալի, հնչում է որդես XX դարի մեծ բանաստեղծի խոսքը նույն դարի մեծ արձակագրի մասին:

իր: Չենց միայն Գրիգորի Մելիխովի կերպարը բավական է, որ անմահության դասակարգում ինձ լինեի Միխայիլ Հոլոխոսի գլխին:

18 հունվարի, 1956, երեւան»:

Բանաստեղծի այս խոսքը առաջին անգամ հղագրվեց հայ և ռուս ժողովուրդների եղբայրությունը խորհրդանշող «Բա- րեկանություն» ժողովածուում: Իսկ 1957 թ. գրի կազմողը՝ Անոս Արզումանյանը հասուկ այցելում է Վեբենակայա սանիցան և ժողովածուն նվիրում Հոլոխոսին:

Գիրքը մեծ հղավորություն է թողնում Հոլոխոսի վրա և, ինչդիպիսն, վկայում է Ա. Արզումանյանը, Հոլոխոսը անկեղծ զգացվում է, որ իր մասին հասուկ խոսք է ասել Ավետիկ Իսահակյանը:

Դա 1957 թ. ամռանն էր, իսկ 1957 թ. հոկտեմբերին դրեժը վախճանվեց: Վեբենակայայից եկավ հեռագիր. «Низко склоняю голову перед прахом великого поэта Аветики Исаакяна. Михаил Шолохов».: «Խոնարհում եմ գլուխս մեծ բանաստեղծի՝ Ավետիկ Իսահակյանի անշունչ առաջ: Միխայիլ Հոլոխոս»:

Ավիկ ԻՍԱՀԱԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, դոկտոր
10-17 հոկտեմբերի, 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՑԵԻ ԳՎԱԿԱՍՏԱՆ ԶԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԵԼ ԿԱԶՄԿԵՐՊՈՒՄՆ ԿԵՐԱՆ

ու Չարկալի կասարումն աղանդիկ ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) հայտա- յք, որն անցկացվելու է ՀՀ կառավարության 02.03.2006թ. № 417-Ն որոշմամբ սահման- մասնակցելու հայտ կարող է ներկայացնել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական օրենքով սահմանված կարգով անհատ և/կամ օրգանիզմ իրականացնելու իրավունքով: Եթե է ներառվում դիմում, անհի տեսական գրանցման վկայականի դառնում, օրենքով սահման- արված՝ անհատ օրգանիզմի գնահատում իրավասությունը հավաստող փաստաթուղթ, իսկ ներում կասարումն օրենքով սահմանված աշխատանքների մասին տեղեկատվություն, երևան Խա- րկալիցում գնահատման աշխատանքների օրենքով կազմակերպման հնարավորության մա- չեղելով, ինչդիպիսն նաև մասնակցի ծառայությունների գնի վերաբերյալ առաջարկություն: Ել ներկայացվում է անհի կողմից՝ ստեղծված և ստորագրված փակ ծառու, որի դիմերտին է կնքվում:

մինչև հայտերի բացման օրը»:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Մրցուբային հանձնաժողովին՝ ծառայության Բաղա- դասարկման բաժնի միջոցով Բ.Երևան, Չարկայան 41ա հասցեով մինչև 29.11.2021թ. ժամը 08:00-ի և կազմված լինեն հայտերն: Հայտերը կազմվեն 03.12.2021թ. ժամը 15:00-ին: Մե- ռակցիները և մրցան ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել մրցուբայի հայտերի բացման, մրցուբայի հայտերի ամփոփման նիստերին:

Հայտերը կանաչափ չՀՀ կառավարության 02.03.2006թ. № 417-Ն որոշմամբ սահմանված և համապատասխանող մասնակցից:

ժ հայտերը ծանաչված մասնակցին սահմանված կարգով կառավարվելու մեկ տարի ժամկետով ութսուն երևան Խաղալի և մարզային բաժինների կողմից իրականացվող կասարողական վա- ճարած օրգանիզմի գնահատման ծառայությունների մատչման դաշմանագիր:

Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ ԿՎԱԿԻՄՈՒ ԶԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 1-ին «Հրապարակային վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրեն- ի (21.06.2014թ. 30-110-Ն) 12-րդ, 13-րդ և 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետով, ինչդիպիսն նաև ՀՀ կառավարու- թյան 19 նոյեմբերի 2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի 4-րդ գլխի 46-րդ մասով սահմանված կարգավորում- ներով՝ 2021թ. նոյեմբերի 9-ին ժամը 12:00-ին ՀՀ Արագածոտնի մարզի Շաղկախովի խորհրդակցական համայնի Գե- ռաժոնը ընկալվելու էր իրականացնում «ԱՎԿ» ՍՊԸ կողմից ներկայացված «ՀՀ Արագածոտնի մարզի Գեղամորի գյուղախորհրդային խորհրդի երևանյան տեղաբնակ 2021-2024թթ. նախատեսվող երկարաժամկետ և ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագրի հրապարակային վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» հայտի վերաբերյալ նախնական գնահատման փուլի համարյալ 16 հարցումներ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Շաղկախովի համայնախորհրդարանում և 093286222 հեռ- ուլ: Ներկայացված փաստաթ- թերի վերաբերյալ առաջարկություններն ու հոգեդրությունները կարող են ներկայացնել ինչդիպիսն բանակալ՝ լսման- ի ընթացքում, այնուհետ էլ գրավոր՝ այն հասցեագրելով Շաղկախովի համայնի դաստիարակ տեղեկատվ. Կա- ղախովի@mta.gov.am կայքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Հրապարակային վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի /21.06.2014թ. 30-110-Ն/ համաձայն, ինչդիպիսն նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի նոյեմբերի 10-ին ժամը 15:00-ին ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնախորհրդարանում (հասցե՝ Բ. Արարատ, Օգոստոսի 23/62) տեղի կունենան քաննված կառավարողական մարզկոնցիների և մեծաղների (մեծա- ղական թափոնների) վերաբերյալ գործարանի վերադիմման նախատեսվող գործունեու- թյան շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտի նախագծի վերաբերյալ համարյալ ծանուցում և քննարկումներ (1-ին փուլի համարյալ ծանուցում և քն- արկումներ): Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ «ԱՍ ՄԵՏԱՆ» ՍՊ ընկերության գրա- սենյակում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, Բ. Արարատ, 0701, արտադրական հանգույց 8, ինչ- դիպիսն նաև Արարատի համայնախորհրդարանում:

Մասնակիցների ցանկ

2021թ-ի նոյեմբերի 10-ին ժամը 15:00-ին ք. Արտաշատի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայացած ք. Արտաշատ, արտադրական հանգույց 8 հասցեում բանեցված կապարաթթվային մարտկոցների և մետաղների (մետաղական թափոնների) վերամշակման գործարանի վերազինման նախատեսվող գործունեության նախագծի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Վարդան Բաբայան	ՀՀԻՐ Բնակարանային շինություն, համայնքապետարան	091223690	
2.	Կամ Թեմուրյան	— " — —	091586635	
3.	Հենրիկ Վանդեմյան	անհատ.		
4.	Սիմոն Դարսյան	Խանութի ղեկավար	091906266	
5.	Զեֆար Բանուկյան	«Շառվերա» ընկերություն	093646242	
6.	Ջորտաի Շարգվառ	ՀՀԻՐ Բնակարանային շինություն	055372510	
7.	Կարգիսի Դադարյան	Համայնքապետարան	098187765	
8.	Սերգեյ Արմ	ՍՏՏՏ 25000 24-10	098435107	
9.	Դավիթյան Լևոն	ՀՀԻՐ Բնակարանային շինություն	093000517	
10.	Նիկոլ Դադարյան	«Խոյակ» ընկերություն	093444144	
11.	Վահագն Դադարյան	ՀՀԻՐ Բնակարանային շինություն	055644446	
12.	Գալստի Գրիգորյան	«Համայնքապետարան» ընկերություն	095025753	
13.	Արմեն Եսայան	«Ա.Ս. Եսայան» ընկերություն	091363366	
14.	Վահագն Դադարյան	ՀՀԻՐ Բնակարանային շինություն	093252533	
15.	Նիկոլ Դադարյան	ՀՀԻՐ Բնակարանային շինություն	098090153	
16.				
17.				
18.				
19.				
20.				

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բանեցված կապարաթթվային մարտկոցների և մետաղների (մետաղական թափոնների) վերամշակման գործարանի վերազինման նախատեսվող գործունեության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2021թ-ի նոյեմբերի 10-ին, ժամը 15:00-ին ք. Արտաշատի համայնքապետարանի նիստերի դահլիճում (հասցե՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62) տեղի ունեցան Արտաշատ համայնքում բանեցված կապարաթթվային մարտկոցների և մետաղների (մետաղական թափոնների) վերամշակման գործարանի վերազինման նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թ-ի հոկտեմբերի 29-ի թիվ 184 (7625) համարում:

Հանդիպմանը մասնակցում էին Արտաշատի համայնքապետարանի, նախատեսվող գործունեության ձեռնարկողի՝ «ԱՍ Մետալ» ՍՊԸ-ի, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Ի Սի Ի Քաուքազուս» ՍՊԸ), ինչպես նաև տարածքային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Արտաշատ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Այվազյանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանդիպման նպատակը և մասնակիցների շրջանակը: Այնուհետև Վ. Այվազյանը խոսքը փոխանցեց ձեռնարկողի՝ «ԱՍ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Մադոյանին ներկայացնելու նախատեսվող գործունեության մասին մանրամասները:

Ա. Մադոյանը ներկայացրեց, որ «ԱՍ Մետալ» ՍՊԸ ընկերությունը հիմնադրվել է մոտ 2 տարի առաջ, գործունեության հասցեն է ՀՀ Արարատի մարզ, քաղաք Արտաշատ, Արտադրական հանգույց 8, որտեղ տեղակայված է նաև վերազինվող գործարանը: Նա նշեց, որ ներկայումս նախատեսում է գործունեություն ծավալել մետաղների, մետաղական թափոնների և այլ արտադրական թափոնների գործածության ոլորտում, մասնավորապես իրականացնելով դրանց հավաքում, տարբեր աղբյուրներից ձեռքբերում և վերամշակում: Այնուհետև խոսքը փոխանցվեց նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության ներկայացուցիչ Վ. Թևոսյանին:

Վ. Թևոսյանը ողջունեց մասնակիցներին, ներկայացավ և հայտնեց հակիրճ տեղեկատվություն նախատեսվող գործունեության արտադրական տարածքի նախկին կարգավիճակի և գործունեության մասին: Այնուհետև ներկայացրեց ներկայումս նախատեսվող գործունեության էությունը, այն է՝ ընդունել կապարաթթվային բանեցված

մարտկոցները, առանձնացնել պլաստիկ մասերը, որոնք հետագայում կվաճառվեն որպես պլաստիկ հումք, այնուհետև ձուլել մետաղական մասը և ստանալ կապարի ձուլակտորներ: Այս գործունեության բնապահպանական ռիսկերից մեկը դա մարտկոցների մեջ պարունակվող էլեկտրոլիտն է, որի մեջ պարունակվում է ծծմբաթթու, ուստի էլեկտրոլիտների հետ աշխատելիս պետք է պահպանվեն անվտանգության կանոնները: Այնուհետև հակիրճ ներկայացվեց մետաղական մասի մշակման և ձուլման մեխանիզմը:

Հարց՝ Ա. Բսրայեյան – Արդյո՞ք նման գործունեության համար նախատեսվում է ունենալ պոչամբար կամ աղբավայր թափոնների համար:

Պատասխան՝ Վ. Թևոյան – ձուլման ժամանակ կատարվում է շերտավորում, որի ընթացքում առաջանում է թափոն, որը պատկանում է թափոնների 3-րդ դասին, ըստ վտանգավորության սանդղակի: Այդ թափոնները պետք է կուտակվեն, դրանց համար մշակվի թափոնների անձնագիր, համաձայն շրջակա միջավայրի նախարարի հրամանի, այնուհետև համայնքապետարանի թույլտվությամբ այդ թափոնները կարող են տեղափոխվել կենցաղային աղբավայր, սակայն պահվեն առանձնացված տեղում: Թափոնները հանդիսանում են նախատեսվող գործունեության 2-րդ բնապահպանական ռիսկը: 3-րդ ռիսկը արտանետումներն են, որոնք առաջանում են ցանկացած ձուլման գործընթացի ժամանակ: Արտանետումները բացառելու նպատակով պետք է պարտադիր օգտագործվեն գոիչներ, այս փուլում գոիչների տեսակները դեռ որոշված չեն, սակայն երբ հստակեցվի տեխնոլոգիական գործընթացը, կորոշվեն նաև գոիչների տեսակները:

Այնուհետև Վ. Թևոյանը նշեց, որ նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների դասվում է Ա կատեգորիային և ենթակա է 4 հանրային լուսմների: Այժմ կատարվում է նախատեսվող գործունեության մասին հանրության տեղեկացում, իսկ հետագա քննարկումների ընթացքում կներկայացվեն նաև ավելի հստակ թվային ցուցանիշներ նախատեսվող գործունեության մասին: Համայնքապետարանը և բնակիչները ունեն ժամանակ ծանոթանալ նախատեսվող գործունեության վերաբերյալ նյութերին և պատրաստել իրենց հարցերն ու առաջարկները: Նա նշեց նաև, որ նախատեսվող գործունեության մեջ բացի կապարաթթվային բանեցված մարտկոցներից նախատեսվում է նաև ընդունել և մշակել ալյումինի և պղնձի թափոններ, որի գործընթացը գրեթե նույն է, ինչ նախատեսված է կապարի համար, հաշվի առնելով տարբեր մետաղների համար նախատեսված համապատասխան ջերմաստիճանները: Տեխնոլոգիական մեթոդները հստակեցնելուց հետո, կորոշվեն նաև ֆիլտրների/գոիչների ամենաարդյունավետ տեսակները:

Հարց՝ Հ. Ավետիսյան – արդյո՞ք կլինի բավարար հումք նման արտադրություն կազմակերպելու համար, շուկան ուսումնասիրվե՞լ է:

Պատասխան՝ Ա. Մադոյան – մեր ուսումնասիրություններով այժմ կա հնարավորություն հավաքագրել ամսական մինչև 100 տոննա բանեցված մարտկոցներ:

Հարց՝ Ս. Մկրտչյան – կեղտաջրերի համակարգ նախատեսված չէ փաստաթղթերով, արդյո՞ք ջուր չի օգտագործվելու այս արտադրության մեջ:

Պատասխան՝ Ա. Մադոյան – ջուր գրեթե չի օգտագործվելու քանի որ մարտկոցները հիմնականում լինում են դատարկ և լվացման գործընթաց չի նախատեսվում:

Լրացում՝ Վ. Թևոսյան – մարտկոցները այո հիմնականում լինում են առանց էլեկտրոլիտի, կլինի հիմնականում կապարը և պլաստիկ մասը: Իսկ տեխնոլոգիական գործընթացների ժամանակ ստացված ջուրը իր ցուցանիշներով համապատասխանում է սովորական կոյուղաջրին: Այնուամենայնիվ, Ձեռնարկողը պատրաստ է նաև նախատեսել և կիրառել այնպիսի տեխնոլոգիա, որը թույլ կտա ընդունել մարտկողը, եթե այն ունի նաև էլեկտրոլիտի լուծույթ՝ տեղում կազմակերպելով նաև դրա մշակում-չեզոքացումը:

Ծավալվեց քննարկում արտադրամասի տարածքի, հողամասի, նախկին և ներկա սեփականատերերի մասին:

Բարձրացվեցին նաև ստեղծվող աշխատատեղերի քանակի, ինչպես նաև կին աշխատակիցների առկայության, իրենց աշխատավարձերի չափի, ինչպես նաև անվտանգության և աշխատողներին հատուկ սննդի տրամադրման մասին հարցերը:

Ա. Մադոյանը ներկայացրեց նաև մարտկոցների ընդունման գործընթացը և մոտավոր գները, ինչպես նաև տեղեկացրեց, որ ՀԿ-ների ներկայացուցիչները կարող են հետազայում այցելել արտադրամաս և հետևել գտման գործընթացներին:

Այլ հարցեր չհնչեցին և Արտաշատ համայնքի ղեկավարի տեղակալ պարոն Վ. Այվազյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար և ամփոփելով ավարտեց հանդիպումը:

Քննարկումների վարող

և պատասխանատուի ներկայացուցիչ՝
Արտաշատ համայնքի ղեկավարի տեղակալ՝



Վ. Այվազյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝
«ԱՍ Մետալ» ՍՊԸ ներկայացուցիչ՝



Ա. Մադոյան

Քննարկումների արձանագրող՝
«Ի Սի Ի Քաուքազուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝



Կ. Բաբայան

Հավելված 3. ՏԻՄ նախնական համաձայնության գրությունը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ք.Արտաշատ, Օգոստոսի 23, 62
г.Армавир ул.Огостоси 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ. /Тел./Tel/ /0235/2-23-83
/010/ 25-05-19
Ֆաքս /Факс/Fax/ 2-50-00
Էլ. փոստ /E-mail: artashatmeria@bk.ru

025/1156
N -----
03 12
«-----» -----2021 թ.

„ԱՍ ՄԵՏԱԼ“, ՍՊ ընկերության տնօրեն
պարոն Կ. Մ Ա Լ Խ Ա Ս Ց Ա Ն Ի Ն

Հարգելի պարոն Մալխասյան.

Ի պատասխան Ձեր՝ 22.10.2021 թ.-ի գրության /Էլեկտրոնային եղանակով Արտաշատի համայնքապետարան մուտքագրված 02.11.2021թ-ին/, տեղեկացնում եմ, որ „Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին,, ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 15:00-ին Արտաշատի համայնքապետարանում տեղի են ունեցել .Արտաշատ համայնքում /ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, 0701, արտադրական հանգույց 8 հասցեում/ բանեցված կապարային մարտկոցների և մետաղների /մետաղական թափոնների/ վերամշակման գործարանի վերագինման նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ, որի ընթացքում նախաձեռնության հեղինակների և այլ մասնագետների կողմից ներկայացվել և հանրային քննարկման մասնակիցների հետ քննարկվել է նախատեսվող գործունեության վերաբերյալ փաստաթղթերը և նախնական գնահատման հայտը:

Քննարկման արդյունքների հիման վրա Արտաշատի համայնքապետարանը սույնով տալիս է իր նախնական համաձայնությունը վերոհիշյալ նախատեսվող գործունեությանը:

Հարգանքով՝

/ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿՍԱՐ՝

Կ.ՄԿՐՏՁՅԱՆ

Կատ. Վ.Հակոբյան